

23) Իսլամացած հայը կրնա՞յ մկրտուիլ հայոց եկեղեցւոյ մէջ:

**Այո:** Հայոց եկեղեցին մշտապէս ողջունած եւ խրախուսած է ամէն հայորդիի վերադարձին իր ազգային ինքնութեանը, արմատներուն եւ յատկապէս մայր եկեղեցւոյ գիրկը: Յաւօք, իսլամացած կամ դաւանափոխ հայերն ալ պատմութեան եւ անբարենպաստ ժամանակներու պատճառով հեռացած են քրիստոնէութենէն եւ երկար տարիներ ապրած ո՛չ քրիստոնէական եւ ո՛չ ալ հայկական միջավայրերու մէջ: Եթէ անոնց մէջ կրկին արթնցած է հայկականութիւնը եւ իսկապէս ցանկութիւն ունին մկրտուելու՝ քրիստոնէայ դառնալու, ապա միայն պէտք է ուրախ ըլլալ եւ ցոյց տալ անոնց ճիշդ ճանապարհը: Իսլամացած հայերուն մկրտելու կամ չմկրտելու ինդիքին պէտք է մօտենալ ոչ թէ աւելորդ զգացականութեամբ, այլ՝ հոգեւոր եւ ազգային եկեղեցական անվտանգութեան տեսանկիւններէն: Գաղտնիք չէ, որ բազում այլազաններ, իրենց որոշ շահադիտական նպատակներէն ելլելով, իսլամացած հայերու անուան տակ կը ցանկան մկրտորւիլ հայոց եկեղեցւոյ մէջ: Ուստի եկեղեցին այս հարցին շուրջ որոշ զգուշութիւն կը ցուցաբերէ:

Միտ Քու Տէր Աստուածդ ամբողջ սրտով, մտքով եւ հոգիով:

**ԱՂԱՆԴԱԲՈՐԱԿԱՆ  
ՇԱՐԺՈՒՄՆԵՐ**

**ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ**

**13. ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆՑ  
ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ**

Ճշմարտութիւնը հիմն ու խարխիւն է մեր հաւատքին ու մեր փրկութեան եւ ճշմարտութիւնը գիտնալը պարտքն է իւրաքանչիւր գիտակից հաւատացեալի, անոր հետ գինուելու եւ պայքարելու համար ստութեան եւ բոլոր մոլորեցուցիչներուն դէմ: Ահա թէ ինչու «Այս բաները գրուեցան, որպէսզի հաւատաք թէ Յիսուս Քրիստոսն է, Աստուծոյ Որդին եւ որպէսզի հաւատալով՝ կեանք ունենաք Անոր անուանով» (Յովհն. 20.21):

Որպէսզի Եհովայի վկաները իրենց խաբեբայ միջոցներով չմօտենան, պէտք է ամուր պահենք մեր հաւատքը, ճանչնանք մեր եկեղեցւոյ հաւատամքն ու պատմութիւնը, սերտենք Աստուածաշունչը եւ ամէնօրեայ մեր հոգեւոր սնունդը դարձնենք զայն:

Արթուն եւ պատրաստ ըլլանք միշտ:

**ԵՆՈՎԱՅԻ ՎԿԱՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ  
ԱՄՐՏԵՑԱՒ:**

Միտի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ՝ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

**ՀԱՍՅԷ.**



ՔՈՒ ԽՕՍԲԴ ԽՄ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԾԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԱ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 11 ՆՈՅՏԵՄԵՐ 2018

ԹԻՒ 45

**ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ**  
Ես.24.1-13: ԵՓ. 5.15-33:  
**ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ 8.49-57**

Մինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը»:

Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախճար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:


Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ չձգեց, որ ռեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք զինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին՝ որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց, որ ուտելիք տան աղջկան:

**ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ, ՄԻ՛ԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛**

Քրիստոսի այս քաջալերական խօսքը հասկնալի եւ կիրարկելի կը դառնայ այն իսկական քրիստոնէայ անհատին, որ իր քրիստոնէական կոչումը կ'ապրի գործով եւ ոչ թէ խօսքով: Սաղմոսերգուն փորձառաբար կը վկայէ ըսելով. «Տէրն է լոյսս եւ փրկութիւնս, որմէ՞ պիտի վախճամ ես: Տէրն է կեանքիս ապաւենը, որմէ՞ պիտի դողամ: (Սղմ. 26.1): Գետեւաբար սիրելի ընթերցող դժուարութեան մէ՞ջ ես մի մտածէր, դիմէ անմիջապէս Աստուծոյ եւ վստահ գիտցի՛ր, որ Տէրը անպայման պիտի լուծէ հարցդ, եւ քեզմէ պիտի հեռացնէ թշնամին: ՄԻ՛ ՎԱԽՆԱՐ ԱՅԼ ՄԻԱՅՆ ՈՒ ՄԻԱՅՆ ՀԱԻԱՏԱ՛ ՈՒ ԱՊԱԻՆԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ:

## ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

### ՄԵԼԻՏՈՍ ԶԱՅՐԱՊԵՏ՝ ԱՆՏԻՈՔԻ



Ծնաւ Փոքր Հայքի Մելիտինէ քաղաքին մէջ եւ նախ Սեբաստիոյ եպիսկոպոս կարգուեցաւ: Քիչ ժամանակ ետք Անտիոքի Պատրիարք ընտրուեցաւ այն յոյսով, որ իր քաղաքը բարձր պիտի խաղաղեցնէ եկեղեցին, որ այդ միջոցին դաւանական եւ այլ կարգի վէճերով խոռված էր մանաւանդ այդ շրջանին մէջ: Ամիս մը յետոյ սակայն Կոստանդիանոս աբարեց գինք եւ կարն միջոցի մը համար իր աթոռը վերադարձաւ Յովիանոս կայսեր օրով ու նորէն աբարեւելով՝ վերջնականապէս դարձաւ 378-ի վերջերք՝ Գրատիանոս կայսեր ժամանակ: Կ. Պոլսոյ ժողովին մասնակցող 150 հայրապետներէն մէկն էր: Ինքն էր, որ Ս. Գրիգոր Նագիանգացին եպիսկոպոս բազմեցուց կայսերական քաղաքին: Վախճանեցաւ Կ. Պոլիս, Բ. տիեզերական ժողովը դեռ չվերջացած: Իր մարմինը տարուեցաւ Անտիոք ու թաղուեցաւ նոյն քաղաքի նահատակ սուրբին՝ Բաբելասի կողքին: Ս. Յովիան Ոսկեբերան եւ Ս. Գրիգոր Նիւսացի իր վրայ ներդրականներ խօսած են: Տօնը կը գուգադիպի Երկուշաբթի, 12 Նոյեմբեր 2018-ին:

## ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

**Ո՞վ է Աստուածպաշտութիւնը հաստատողը:**

Նոր Ուխտի եկեղեցիին Տէրը՝ Յիսուս Քրիստոս: Անիկա սահմանեց խորհուրդները եւ մեզի սորվեցուց երկրպագել Աստուծոյ հաւատով եւ նշմարտութեամբ, իսկ Աստուածպաշտութեան յետագայ կարգաւորութիւնն ու կատարելագործութիւնը յանձնեց առաքելներուն: Առաքելներն ալ իրենց կարգին, Նոր Ուխտի եկեղեցւոյ ծառայութիւնը, ո՛չ միայն խօսով եւ օրինակով, այլ՝ խորհրդական ձեռնադրութեամբ յանձնեցին իրենց յաջորդող եպիսկոպոսներուն, անոնց իրենց առաքելներուն իրաւունքը տալով՝ հարստացնելու Աստուածպաշտութեան ամբողջ կարգը, համաձայն հաւատքի հոգիին եւ հաւատացեալներու պէտքերուն: Այս բոլորով, Աստուածպաշտութիւնը մեզի հասաւ առաքելական եւ սուրբ հայրերու աւանդութիւններով:

### ԽՈՆԱՐՅՈՒԹԻՒՆ ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹԸ

\*\*\*\*\*

Սորվեցո՛ւր մեզի, ո՞վ Տէր, որ տեսնենք եւ օգտագործենք ծառայութեան ամէն պատեհութիւն. տանք՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարինք՝ առանց վիրարտուելու, աշխատինք՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայենք՝ առանց վարձատրութիւն սկսնակալելու. այն գիտակցութեամբ, թէ քու կամքդ է որ կը կատարենք: Ամէն:

**Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՅԻ**

## ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

### ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ ԱՏԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, Կայէնին՝ առաջին մարդասպանին եւ եղբայրատեացին գործերուն ու պատուհասներուն մասին գրեցի անոր համար, որ գիտնա՛ք, թէ ամէն մարդ որ իր եղբայրը, այսինքն ընկերը ատէ, մարդասպան է Կայէնի նման, որովհետեւ բոլոր մարդիկ իրարու եղբայր են ստեղծագործութեամբ: Քրիստոնեաները ա՛լ աւելի եղբայր են, որովհետեւ միեւնոյն Աւագանին ծնունդ ըլլալով՝ երկնաւոր Հօր որդի են եւ ամէն օր կ'ըսեն. «Հայր մեր որ երկինքն էս»:

Գիտցէ՛ք նաեւ այս, որ սպաննութիւնը բազմապիսի ձեւերով կը կատարուի: Ոմանք սուրով կամ այլ գործիքներով կը սպաննեն, ուրիշներ՝ դեղերով եւ այլ բազմապիսի հնարներով, իսկ ուրիշներ՝ մատնութեամբ պատնառ կ'ըլլան սպանման եւ մահուան, եւ այս բոլորին սկիզբը ատելութիւնն ու բարկութիւնն է: Այս պատնառու մեծ աւետարանիչը՝ Յովհաննէս կ'ըսէ. «Ամէն ով, որ ատէ իր եղբայրը, այսինքն ընկերն ու հաւատակից քրիստոնեան, Կայէնին նման եղբայրասպան է եւ անոր անէծքն ու պատուհասը կ'ընդունի» (Ա. Յովհ. Գ.15): Քրիստոս եւս Աւետարանին մէջ կը հրամայէ, թէ «Ան, որ գուր տեղ բարկանայ իր եղբոր, գեղեցիկ պարտական է» (Մատ. Ե 22):

Արդ, ողորմեցէ՛ք ձեզի, ինչպեցէ՛ք իրարու եւ մի՛ առէ՛ք զիրար: Մի՛ նախանձիք, ոիս մի՛ պահէ՛ք, մի՛ մատնէ՛ք, մի՛ գրկէ՛ք, մի՛ չարախօսէ՛ք մի՛ անարգէ՛ք, խոռով մի՛ մնա՛ք, մի՛ գարնէ՛ք, անդորմ մի՛ ըլլա՛ք: Յորդորակներ

## ՀՈԳԵԻՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

### ՈՉԻՆՉ ԿԸ ՊԱՏԱՅԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴՈՒՆ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՒԾՈՅ ԹՈՅԼԱՏՈՒՈՒԹԵԱՆ

«Իմ վրաս ո՛չ մէկ իշխանութիւն պիտի ունենայիր՝ եթէ քեզի վերէն՝ Աստուծմէ տրուած չըլլար» (Յի. 19.11): Յիսուս այս խօսքերը արտասանեց երբ կանգնած էր Պիղատոսի առջեւ: Յիսուս իր այս բառերով կու գայ յիշեցնելու մեզի, որ հաւատացեալներու կեանքին մէջ ոչինչ կը պատահի առանց Աստուծոյ թոյլտուութեան: Եթէ Աստուած իշխանութեան գուր բերած չըլլար Պիղատոսը, ան պիտի չկրնար հարցաճննել Յիսուսը: Եթէ Աստուած թոյլ չտայ, որ աշխարհ մեզ փորձէ՛ աշխարհ չի կրնար մեզ փորձել: Բոլոր մարդոց կեանքին մէջ բոլոր պատահածները չեն որ Աստուծոյ թոյլտուութեամբ կ'ըլլան, այլ՝ մի՛այն Աստուծոյ գաւակներուն կեանքին մէջ պատահածներն են, որ Աստուծոյ թոյլտուութեամբ կ'ըլլան:

### ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՉԸ

Քրիստոսի խօսքը հոգի ու կեանք է, սիրոյ լոյսն ու երկնային խնդրութիւն է, Քրիստոսի խօսքը աստուածային ինքնագոյ լոյսն է: Անիկա կը ներազդէ ո՛չ թէ մակերեսային տրամաբանական բանականութեան վրայ, այլ մարդու սրտի խորքերուն վրայ: Եւ ան որ ընդառաջ կու գայ Քրիստոսի խօսքին եւ անոր առջեւ կը բանայ իր սրտի ամենախորունկ պարունակները, որ պատշաճ կերպով ընդունի այդ աստուածային լոյսը, որպէսզի միաձուլուի անոր հետ՝ կը դառնայ աստուածանման: Կեանքով ընկալուած Քրիստոսի խօսքը կ'աստուածացնէ մարդը:

(Վարդապետ Սոփրոնի)